ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հուլիսի 2013թ. №111-Ա

ՀԱՍՄԻԿ ՂԱՐԱԳՈՉՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՀԱԼԻՃՈՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 75-րդ հոդվածի առաջին մասի դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 27-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Հալիձորի գյուղական համայնքի ղեկավարի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու, համայնքի ղեկավարի արտահերթ ընտրություն նշանակելու, անցկացնելու և ընտրության նախապատրաստման ու անցկացման ծախսերը ֆինանսավորելու մասին» N699-Ն որոշման և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Հալիձոր գյուղական համայնքի ղեկավարի օգնական Հասմիկ Ղարագոզյանի անձնական դիմումի, որոշում եմ՝

1. Հասմիկ Ղարագոզյանին 2013 թվականի հուլիսի 19-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Հալիձոր գյուղական համայնքի ղեկավարի պաշտոնակատար՝ մինչև արտահերթ ընտրության արդյունքում սահմանված կարգով Հալիձոր գյուղական համայնքի նորընտիր ղեկավարի՝ իր պարտականությունների ստանձնումը.
2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Վ.ՀԱԿՈԲՅԱՆ

2013թ. հուլիսի 18
ք. Կապան